զոր պատրաստեալ էին յառաջագոյն, որոշեալ 'ի թղթի անդ զտեղիս իւրաքանչիւր ազգաց այլ և այլ գունով, որով ծանեան Դատաւորք զտեղիսն՝ եւ անաչխատ պարզեցաւ խնդիրն։

Հարցին Դատաւորք ցՅոյնս, զի՞նչ ունիք առ այս պատասխանի. Նոքա մատուցին զդաշնագիրն մեծին Օմարայ գրեալ 'ի թուին Հիճրէթի 15 'ի 20 Ռէպիլ էվվէլ ամսոյ 'ի բարբառ Արարացւոց. սովաւ տիրեալ եմք ասեն ամենայն տեղեաց մերոց և այլոց ազգաց. և առեալ ընթերցան և դարձուցին զայն առ նոսա, և ասեն՝ պահեցէք զայդ զի կարի հնագոյն է՝ և բազում աշխատութեանց պէտս ունի հաստատել զստուգութիւն դորա, զի զկնի Օմարայ՝ Լատինք, ապա Սալահատտին եւ զկնի Սուլթան Սէլիմ առաջին՝ տիրեցին Երուսաղէմի, և չունի պէտս ինչ յառաջակայ դատին ձերոյ. Յոյնք աղաչէին անսալ և քննել զիմաստս նորին. և եղեւ 'ի քննելն, գտին զայն չինծու և յարմարեալ՝ և ասացին, սուտ է այս, զի թիւ սորա կանխագոյն է քան զդահակալութիւն Օմարայ։ Մատուցին զհրովարտակն Ֆաթի Սուլթան Մէհէմմէտի (1), տուեալ զկնի առման Կոստանդինուպօլսոյ. և զայն բնաւ ոչ ընթերցան, զի չէր հարկաւոր առ այն վէճ։ Ապա հանին զհրովարտակս Սէլիմայ Արքայի եւ որդւոյ նորա Սիւլէյմանայ՝ զոր ընկալեալ ընթերցան՝ յորս գրեալ էին ամենայն վանօրայք և տեղիք նոցա, բայց անհամաձայն արձանագրութեանց. 'ի հրովարտակին գրի Սբրպ եւ յարձանագրութեան Սիւրեան. թէպէտեւ ծանեան Դատաւորք, բայց Ռէիզ էֆէնտին ջատագով էր Յունաց։ Փակեցաւ Ատեանն, և արձակեալ անտի Հայոց, եկին 'ի Հասան Փաշա խան, ուր սպասէին բազմութիւն գլխաւորաց եւ ժողովրդոց ընդ Պատրիարքին՝ լսել ինչ 'ի նոցանէ։ Եւ նոքա պատմեցին նոցա զոր ասացին և լուան։ Եւ զի ազգն Հայոց առհասարակ կանխեալ էին յաղօթս, և պատուէր ստէպ լինէր յեկեղեցիս չտալ տեղի նախատական բանից Յունաց և չգրգռիլ 'ի կռիւ ընդդէմ միմեանց,

---

(1) Այս հրովարտակ 'ի մեծի հրկիզութեան մայրաքաղաքին պրեցաւ։ Տես կենսագրութիւն Սուլթան Սէլիմի Տաճկերէն. Եր. 79։